ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3123 - Ա **22 ապրիլի 2009թ.**

ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ՓՈՂՈՑԻ Հ. 90 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԵՆԱ ԱՐՍԵՆԻ ՇԵԳՈՒՆՑԻ, ՄԱՐՈ ԵՐՎԱՆԴԻ ՇԵԳՈՒՆՑԻ, ԱՆՆԱ ՄԻԽԱՅԻԼԻ ՇԵԳՈՒՆՑԻ, ԳԱՅԱՆԵ ՄԻԽԱՅԻԼԻ ՇԵԳՈՒՆՑԻ, ՍՎԵՏԼԱՆԱ ՆԻԿՈԼԱՅԻ ՇԵԳՈՒՆՑԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Լենա Արսենի Շեգունցի (ծնված 25.06.1934թ.), Մարո Երվանդի Շեգունցի (ծնված 01.06.1951թ.), Աննա Միխայիլի Շեգունցի (ծնված 15.01.1979թ.), Գայանե Միխայիլի Շեգունցի (ծնված 06.06.1975թ.), Սվետլանա Նիկոլայի Շեգունցի (ծնված 24.10.1949թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Դավիթ-Բեկի փողոցի հ.90 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 686.64քմ, որից 420քմ մակերեսով հողամասը Լենա Արսենի Շեգունցին, Մարո Երվանդի Շեգունցին, Աննա Միխայիլի Շեգունցին, Գայանե Միխայիլի Շեգունցին, Սվետլանա Նիկոլայի Շեգունցին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 266.64քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 16.03.2007թ., 15.09.2003թ., 20.09.2005թ. ժառանգության իրավունքի վկայագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 19.01.2009թ. հ.3-222, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 15.04.2009թ. հ.20/2-Ե/244 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.04.2009թ. հ.3215 եզրակացությունը, համաձայն որի Դավիթ-Բեկի փողոցի հ.90 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Դավիթ-Բեկի փողոցի հ.90 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Լենա Արսենի Շեգունցի, Մարո Երվանդի Շեգունցի, Աննա Միխայիլի Շեգունցի, Գայանե Միխայիլի Շեգունցի, Սվետլանա Նիկոլայի Շեգունցի հողօգտագործման իրավունքը

բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 420քմ մակերեսով հողամասին կից 266.64քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 266.64քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Դավիթ-Բեկի հ.90 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Դավիթ-Բեկի փողոցի հ.90 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Լենա Արսենի Շեգունցի, Մարո Երվանդի Շեգունցի, Աննա Միխայիլի Շեգունցի, Գայանե Միխայիլի Շեգունցի, Սվետլանա Նիկոլայի Շեգունցի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ